Գուրգեն Բորյան



# ԱՐՅՈՒՆՈՏ
# Երազներ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ

891.99 | 15565

Ե-89 | Եռոյան, Փ.

Նոր կիրակին.

30կ

50 Չ

ԳՈՒՐԳԵՆ ԲՈՐՅԱՆ

891.99-93
Բ-89
ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 Թ.

# ԱՐՅՈՒՆՈՏ ԿԻՐԱԿԻՆ

(ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ)



ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
ՀԼԿՍՄ ԿԵՆՏԿՈՄԻ ԿԻՑ ՄԱՆԿԱ-ՊԱՏԱՆԵԿԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

ԵՐԵՎԱՆ 1949

Շապիկը և իլուստրացիաները
Նկարիչ՝ Վ. ԹԵՎԱՆՅԱՆԻ

ГУРГЕН БОРЯН

Кровавое воскресенье

(На армянском языке)
Армгиз, Ереван, 1949 г.



## ԱՐՅՈՒՆՈՏ ԿԻՐԱԿԻՆ

1.

Գրտավում էր
Անսանձ քամին,
Փողոցներում
Հրոնդյու՛...
Գուժկան քամին

Գորշ քաղաքին
Մի չար բուք էր
Հաղորդում։

. . . . . . . . .

. . . . . . . . .

Թռչում, սուլում,
Խուժում տանիք
Ու ճռչում էր
Մահահոտ.
— Գիտե՞ք, բոլոր
Բանվոր մարդիկ
Պետք է գնան
Ցարի մոտ։

«Հայր ցարի» մոտ
Պետք է գնան,
Խնդրեն հաց ու
Օգնություն։
Իսկ Գապոնը՝
Սև քահանան
Մութ դավեր է
Պատրաստում...

— Ցարը հայրն է
Ձեր բոլորի,
Ցարը ազնիվ,

Ցարը սուրը...
Գապոնը մութ,
Գաղտագողի
Շրշնջում էր,
Փըսփսում։

Դըրսում ձյուն է,
Սառը քամին
Մոլեգնում է
Կատաղի...
— Է՜խ, ձեզ հաց է
Տալու ցարը,
Սովից նա ձեզ
Կազատի...



Երթը շարժվեց...
Կարիքը՝ ծով,

Կույր հավատն էր
Սրտերում,
Իսկ պալատը՝
Դաժան հոգով
Չար եղեռն էր
Պատրաստում։

Մեծ քաղաքի
Փողոցներում
Երթը ձգվեց
Բազմամարդ.
— Ցա՛րը... ցա՛րը...
Ձեզ չի՛ խաբի,
Նա մեզ հայր է
Գթառատ...

Հեռվում՝ թանձր
Մեգ-մըշուշում
Գոռ պալատն էր
Բարձրացել,
Չար ու դաժան,
Անսիրտ ու լուռ
Նա կանգնել էր —
Քարացել։



Նրա չորս կողմ՝
Հրանոթներ
Ու մերկացած
Սվիններ...
Մասսան անզեն,
Մասսան անզեն,
Ձմռան պայծառ...
Յունկերներ...

Ճըչաց քամին.
—Հա՜ց... հա՜ց...,—սուլեց,
Զարնվեց դեմքին
Յունկերի,
Գոռեմարտի
Բռնվածի պես
Լիզեց պատը
Պալատի:

Իսկ պալատի
Դեմ հանդիման
Ծըփում էր ծովը
Մարդկանց.
Այնտեղ՝ ծերեր,
Այնտեղ՝ կանայք,
Այն կողմ՝ շարքերը
Մանկանց։



Կարիք ու սով,
Տանջանքը ծով
Նրանց սիրտն են
Բորբոքել—

Բանվոր մարդիկ
Արդար ցասմամբ
Ցարին գանգատ են-
բերել։

Իսկ պալատը
Ժանտ, դավադիր —
Լուռ, մթագնած,
Անզիջում,
Զմռան միգում
Մեծ սարդի պես
Մի չար միտք էր
Որոճում։

Ցարը լըցվեց
Թույն-մոլուցքով
Ու մռնչաց.
— Կը
      րա
            կե՛լ...
Դըրսում լացող
Անսանձ քամին
Կարծես գուժկան էր
Դարձել։

Եվ ձմեռվա
Այն սառն օդում

Գընդակները
Շաչեցին,
Համազարկի
Գոռ որոտից
Հոծ շարքերը
Դողացին։



Ընկավ հայրը,
Ճչաց կինը,
Մանուկները
Լաց եղան։

Մի պատմու
Կարմիր արյամբ
Գաղ մայթերը
Թաց եղան։



— Մայրի՜կ...,— կանչեց
Մանկիկն անմեղ,
Գրկեց մորը
Կաթոգին։
Չար գնդակից
Նա էլ ընկավ
Իր կիսամեռ
Մոր կողքին։

Կարմրեց ձյունը
Տաք արյունից,

Եվ ամբոխը
Մռլտաց.
— Հա՛յ, դավադի՛ր
Ցար սատանա...
— Հա՛խ, խաբված ենք.
Մենք խաբված...

Եվ «հայր ցարը»
Խաբեց նրանց,
Խոստացավ հաց,
Օգնություն,
Բայց հացի տեղ
Գնդակ տեղաց...
Ու խնդացին
Պալատում:

Լալիս էր խենթ
Գուժկան քամին,
Բուքն էր ոռնում
Կատաղած,
Պտտվում էր
Պալատի շուրջ,
Արձագանքում.
— Գրնդա՛կ... Հա՛ց...

2.

Ու ծավալվեց
Երկրե-երկիր․
Ցասման արդար
Կանչը մեծ,
Բյուր սրտերում
Վրեժն ելավ —
Լափի՛ն տըվավ
Ծովի պես։

«Ալ Կիրակի» —
Անուն տըվին
Բանվոր, գեղջուկ
Այդ օրին,
«Ալ Կիրակի»,
Որ սրտերում
Աստղեր վառեց
Պայքարի։

Եվ թե՛վ առավ
Կանչը մարտի

Ստեպներում,
Լեռներում,
Դարձավ հըզոր
Մի մարտակոչ,
Դարձավ գըրոհ
Մարտերում։



Ա 1/5224
5.565

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

Պատ. խմբագիր՝ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Ի. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Կոնտրոլ սրբագրիչ՝ Հ. ՂԱԶԱՐՈՍՅԱՆ

*ՎՖ 04607. Պատվեր 1382. Տիրաժ 3000.*
*Տպագրական 1 մամուլ*
*Հանձնված է արտադրության 28/X—1949 թ.*
*Ստորագրված է տպագրության 17/XI—1949 թ.*

*Հայպոլիգրաֆհրատի № 1 տպարան, Երևան, Լենինի փ. № 65*

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0041247

ԳԻՆԸ 30 Կ.

A Ι / 5224